

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Կ Ք - Բ Ե Մ Ա Կ Ա Կ Ք

● Կիր. 7 փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբ: Ժամարարն էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան:

● Կիր. 14 փետր. — Բարեկենդան Առաջաւորի պահօց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութիւն, Բ. Գողգոթայի վերնամատարան մէջ, Ժամարարն էր Հոգ. Տ. Կիրակ Արդ. Գարիկեան:

● Ուր. 19 փետր. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան նախատօնը պաշտուեցան Ս. Յակոբ: Հանդիսագետն էր Գեր. Տ. Նորայր Եզս. Պողարեան:

● Շր. 20 փետր. — Ս. Սարգսի գորավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Սուրբ Սարգսի Նաղարեան մատարան մէջ, Ժամարարն էր Հոգ. Տ. Զաւէն Արեղայ Զինչիւնեան: «Տէր ու զորմասէն առաջ, Գեր. Տ. Սուրէն Եզս. Քէմ. հանձնաւ խօսեցաւ քարոզ մը պանծացնելով Կիւլպէնկեան զերգաստանի բարեխիշտական շնչեցեալներն ու երկար կեանք մաղթեց կենդանի պարագաներուն, իսկ Ս. Պատարագէն ետք նախագահեց Ս. Աթոռոյ մեծ բարերար Վսեմ. Գալուստ Պէյ Կիւլպէնկեանի ծնողաց, Սարգսի և Տիրուհոյ հոգիներուն ի հանդիստ կատարուած տարեկան հոգեհանգստեան պաշտամունքին:

● Կիր. 21 փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Լըբեշտակապետ, Ժամարարն էր Հոգ. Տ. Վարուժան Արդ. Գապարահան:

● Ուր. 26 փետր. — Տեսաւ ընդառաջի նախատեսակը մեծ վայելուչ հանդիսաւորութեամբ պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, ապա կատարուեցաւ «Անգոստան»: Արարողութեանց կը նախագահէր Գեր. Տեղապահ Ս. Հայրը:

— Իրիկեանդէմին, Մայր Տաճարին մէջ կատարուեցան «Եկեցե՛ք»-ի և «Հովան» խորհրդաւոր արարողութիւնները՝ նախագահութեամբ Գեր. Տ. Նորայր Եզս. Պողարեանի:

● Շր. 27 փետր. — Տեսաւ ընդառաջ: Առաւօտեան ժամերգութեանէն ետք, Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ, Ժամարարն էր Գեր. Տ. Նորայր Եզս. Պողարեան, որ քարոզեց, բնարան ունենալով «Ես լոյս աշխարհի եկի» (Յովհ. ԺԲ. 46): Մարդկութիւնը միշտ պէտք ունի այդ լոյսին: անսայթաք ընթանալու համար կեանքի փշաւից հանապարհէն ու հասնելու յաւիտեանական կեանքին: Զարեմը կը մերժեն այդ լոյսը, ու կը յամենան խաւարին մէջ, վատի երբ գան լոյսին: պիտի յայտնուին իրենց շար արարքները: մինչ բարիները լոյսէն շրջուելու պատճառ մը չունին: Այդպիսիներն են որ, խմստուն կոյսերուն նման, պիտի արժանանան մասնակից ըլլալու երկնասօր փեսային հարսանիքին: Այն տունը որ այդ լոյսէն զուրկ կը մնայ, հոն անպակաս կ'ըլլան վէճեր ու խռովութիւններ ու զանազան մօլութիւններ:

● Կիր. 28 փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութիւն, Բ. Գողգոթայի վերնամատարան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Դեղոյ Արեղայ Նաղարեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Կ Ք

● Դշ. 2 փետր. — Կէսօրէ վերջ, Գեր. Տեղապահ Ս. Հայրը վանական զործերով մեկնեցաւ Խարայէլ և վերադարձաւ Ուր. 5 փետր. Կ. Վ.:

— Կէսօրէ վերջ, Անթիլիասէն հիւրարար քաղաքս գտնուող Գեր. Տ. Գնէլ Ծ. Վրդ. ձէրէճեան և Հոգ. Տ. Սահակ Արդ. Այվազեան վերադարձան Անթիլիաս:

● Շր. 6 փետր. — Կ. ա. ժամը 11:30-ին, Քաղաքիս Բրիտանական Նոր Ընդհ. Հիւպատոսը, Mr. T. Wikeley, առաջին անգամ ըլլալով այցելեց Գեր. Տեղապահ Ս. Հօր:

● Դշ. 9 փետր. — Կ. ա. ժամը 11-ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի և Տիար Կ. Հինդլեանի, փոխ-այցելութիւն տուաւ Mr. T. Wikeley-ին, Բրիտանական Հիւպատոսարանին մէջ:

— Իրիկեան ժամը 6-ին, փարիզի Քաղաքապետ Monsieur Frédéric Dupont-ի երուսաղէմ այցելութեան առթիւ, Ֆրանսական Ընդհ. Հիւպատոսարանին մէջ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գեր. Տ. Սուրէն Եզս. Քէմ. հանձնաւ, Հոգ. Տ. Զաւէն Արեղայ Զինչիւնեան և Տիար Կարպիս Հինդլեան:

● Դշ. 10 փետր. — Կ. ա. ժամը 11-ին, Քաղաքիս Նորընտիր Délégué Apostolique (Պապական Նուիրակ) Mons. Silvio Oddi, իր առաջին այցելութիւնը տուաւ Պատրիարքարանին:

— Կ. Վ. ժամը 3:30-ին, Palestine Archaeological Museum-ի սրահին մէջ, Miss Dorothy Garrod-ի D. Sc., F. B. A. կողմէ «The fossil men of Mount Carmel» նիւթին շուրջ տրուած բանախօսութեան ներկայ գտնուեցաւ Հոգ. Տ. Զաւէն Արդ. Զինչիւնեան:

● Բշ. 15 փետր. — Կ. ա. ժամը 11-ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Հայրերու, փոխադարձեց Պապական Նուիրակին այցելութիւնը Լատինաց Պատրիարքարանին մէջ:

● Եշ. 18 փետր. — Կ. ա. ժամը 11-ին, Պէյրութի UNRWA-ի բարձրատիւնեան պաշտօնեաներէն Mr. Constantine Vlachopoulos այցելեց Պատրիարքարան:

● Դշ. 23 փետր. — Կէսօրէն ետք, Գեր. Տեղապահ Ս. Հայրը վանական զործերով մեկնեցաւ Խարայէլ և վերադարձաւ Եշ. 25 փետր. Կ. Վ.:

● Կիր. 28 փետր. — Առաւօտուն, Հոգ. Տ. Կիրակ Արդ. Գարիկեան մեկնեցաւ Նոր Երուսաղէմ պատարագելու և հոգեւորապէս միութարեւելու համար տեղւոյն փոքրածիւր գաղութը և վերադարձաւ Երկուշաբթի կէսօրէ վերջ:

ՄԻԱԲԱՆ ՆԵՐՍԷՍ ՆԵՎՐՈՒԶԵԱՆ

Յաւով կ'արձանագրենք մահը Ս. Աթոռոյ տարեց միաբաններէն Ներսէս Նեւրուզեանի. որ տեղի ունեցաւ Դժ. 9 Փետրուարի գիշերը:

Հանգուցեալը ծնած է Էփրէզ 1871ին, 1896ին մտած է Ս. Աթոռոյ ծառայութեան մէջ իբրեւ աշխատաւոր Միաբան:

Թաղման կարգը կատարուեցաւ Զորեքշարթի 10 փետրուարի առաւտուռն, նախապաշտութեամբ Գեոր. Տ. Սուրբէն եղաւ. քէմհանձանի. Ներկայ էին բոլոր մարզապետ հայերը. վերջին անգամ ըլլալով իրենց յարգանքի տուրքը վճարելու Ս. Աթոռոյ 58 տարիներ իր անձնուէր ծառայութեամբը խնդրէ՞ այս բարի և աստուածալախ ծնունդին: Հանգուցեալին մարմինը ամփոփուեցաւ Զամ-Թաղի գերեզմանատան մէջ:

Տէրը թող իր յաւիտենական լոյսին արժանացնէ բարեպաշտ Նեւրուզեալի հոգին:

ՌԱՐԵՊԱՇՏՈՒԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Շնորհակալութեամբ և օրհնութեամբ կ'արձանագրենք 1953 տարւոյ դնքացին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին տուած հետեւեալ բարեպաշտական նուէրներ:

1. — Բարիգործակ Տիկին Վալա խաչատուրեան, Ս. Յակոբայ սեղանին երկար փռոց մը ոսկեթիւղ եւ արծաթաթիւղ բանաւորով, ձեռամբ Հոգ. Տ. Սեբովրէ վրդ. Մանուկեանի:

2. — Պուլնոս-Արէսէն Տիկին Մարիմա Զովակիմեան, Ս. Յակոբայ աւագ սեղանին Տերմակ ծածկոց մը, ինքնածեղագործ, ձեռամբ Հոգ. Տ. Սեբովրէ վրդ. Մանուկեանի:

3. — Հիւս. Ամբրիկայէն Տիկին Ալուանի Պարեհեան, Ս. Գլխաղբին ինքնածեղագործ սեղանի բորփուրայ մը (հրեշտակ կշիռ ի ձեռին):

4. — Պուլնոյ Տիկին Արմինուհի Այնթապեան, մէկ մեծ և քարակ թրքական (սանաբրլը) ոսկեղրամ Ս. Գլխաղբի եւ կամ Ս. Աստուածամայ պատկերին ի Ս. Յակոբ:

5. — Պաղտատէն Տիկին Սառա Տրպէ Մանուկեան, Տերմակ ձեղագործ բորփուրայ մը. Ս. Յարութեան Տաճարին, ձեռամբ Պր. Մանուէլ Մաթասեանի:

6. — Հայէպէն Այնթապցի Տիկին Նէվրիկ Պաղտապեան, քառակ զործ կտր բորփուրայ մը, Ս. Յակոբայ Տաճարին:

7. — Հայէպէն Օրփորգ վերծին Պաղտապեան, մէկ Տերմակ բորփուրայ մը. Ս. Յակոբայ Տաճարին, ձեռամբ Տիկին Արաքսի կարապետեանի:

8. — Հայէպէն Այնթապցի Տիկին Սիւսանոյ Սրբմայեան, մէկ ոսկի կարմիր բորով մասանի, Ս. Աստուածամայ պատկերին որ ի Ս. Յակոբ:

9. — Կիսրոսէն Արսլանպէկցի Տիկին Ովսաննա Պորոս, մէկ Տերմակ տեղագործ ծածկոց, աւագ խորանին Ս. Յակոբայ, ձեռամբ Պր. վարդէս Պատմանեանի:

10. — Մարաշցի Տիկին Թագուհի Մայախեան, մէկ կտր տեղագործ բորփուրայ Ս. Գլխաղբին:

11. — Մարաշցի Տիկին Մարի Գ. Գագանեան, Ս. Յակոբայ աւագ խորանին մէկ ինքնագործ լաւ Տերմակ ծածկոց մը:

12. — Մարաշցի Ս. Աթոռոյ Միաբան Ռարա. կիր Արամ պապա Սէրայտարեան. Ս. Յարութեան Տաճարին մէկ ձեռք լման ժամաբարի զգեստ, և Ս. Գերեզմանի համար մէկ ծածկոց-փռոց մը: Գարծնալ, Ս. Գերեզմանի հրեշտակի վէմին ծածկոց մը, և վարապայ մը Ս. Զովաննու մատրան աւագ խորանին:

13. — Այնթապցի Էլիզ Մայրապետ Մամեան, մէկ շուրջառ. մէկ փորութար և զոյգ մը բազպան, Ս. Հրեշտակապետաց Նիկոնիցիին:

14. — Երուսաղէմ Մարաշցի Տիկին Վարսենիկ Համբարձումեան, մէկ սեղանի կապոյտ խալով բրէ մ ծածկոց մը Ս. Յակոբին. լիւթ գործ խաչի երկար բորփուրայ մը և բանի մը հատ ալ մանր մեղրամոմեր:

15. — Երուսաղէմէն Հանքեցի Համբարձում և Սիմակիլ Նազրեան Ս. Յակոբայ Տաճարին մէկ շուրջառ, երկու փորութար և զոյգ մը բազպան ու սրբիչ մը ժամաբարի. որպէս ուխտ իրենց Յակոբ Նազրեան սրբոյն:

16. — Ամանէն Տիկին Պերճուհի Ռուսեան, Ս. Գլխաղբի Տերմակ սեղանի ծածկոց մը:

17. — Երուսաղէմէն Զէյթունցի Տիկին Եղիսաբեթ Կ. Անդրեանեան, ձեղագործ ծածկոց մը Ս. Գլխաղբին:

18. — Եաֆայէն Օրփորգ Մեհրուպէ Զարարեան, Տերմակ ծածկոց մը Ս. Գլխաղբին:

19. — Թեհրանեան Տիկին Արաքսի Եղիա Արաշամեան. Ս. Յակոբայ Տաճարին սեղանի ծածկոց մը, երեք բորփուրայ և մէկ մասի ծածկոց:

20. — Պուլտարակի Կեսարացի Տիկին Երջանիկ Գագանեան, նորր տեղագործ աւետարանի բրանիչ մը Ս. Յակոբայ:

21. — Պուլնէն Տիկին Եւանդ Օղուլուրեան մէկ ոսկեթիւղ ձեղագործ փռոց մը Զրիստոսի Ս. Գերեզմանի Հրեշտակի բարին:

22. — Պուլնէն, Տիկնայր՝ Զրիստինէ Գարսեան՝ Տերմակ փռոց մը — Ովսաննա Տայեան՝ (պատարազ) անձեռոց մը — Ամէլ Էնֆիլէճեան՝ խաչի բռնիչ մը — Արշալոյս Ն. Սագմանեան՝ բորփուրայ մը — Մայրուհի Տէլիմլեճեան՝ խաչի բռնիչ մը — Մարի Հանեան՝ սեղանի ծածկոց մը:

23. — Պլյուսթարակի Հայֆայի Օր. Մաննիկ Մելիքեան, Ս. Գլխաղբի Սեղանին կր նուիրէ Տերմակ ծածկոց մը. ձեռամբ Օր. Գոհարիկ փամպուրեանի (1953 Յուն. 10):

Լուսարարուպեա

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՍՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

تصدرها - بطريقه الارمن الارثوذكس مدير المطبعة - الآب زاوین شنتیان تطبع في مطبعة دير الارمن - القدس العدد ٢

نمبر 1954

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Zaven Chinchinian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

